№ 213 Նոյեմբերի 29 (Դեկտեմբերի 11) 1880 Նոյեմբերի 29 (Դեկտեմբերի 11) № 213

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլ, կէս տարվանը 6 րուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարազգիները խնդրում են ուղղվել
Тифлисъ. Редакція «Мшакъ»

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ"

ԼՐԱԳԻՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

1881 ԹՒԻՆ

(ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

ԿԸ հրատարակվի նոյն գիրքով և նոյն պրօգրամմայով ԱՄԵՆ ՕՐ (բացի տօն և տօներին հետեւեալ օրերից)։

ՊՐՕԳՐԱՄՄԱ։ I Տէրութեան կարգադրութիւններ, II Առաջնորդող յօդուածներ, III Ներքին տեսութիւն, IV Արտաքին տեսութիւն, V Խառն լուրեր, VI Հեռագիրներ, VII Ֆեվիլետօն և Բանասիրական, VIII Յայտարարութիւններ։

ԼՐԱԳՐԻ ԳԻՆԸ, տարեկան 10 րուբլ, կէս տարվան 6 ր., հինգ ամս. 5 ր., չորս ամս. 4 ր., երեք ամս. 3. ր. երկու ամս. 2 ր. և մի ամս. 1 րուբլ։

Գրվել կարելի է խմբագրութեան մէջ հետեւեալ հասցէով. Тифлисъ, редакція «Мшакъ».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր կարծիքը։—Ներքին տեսութիւն։ Նամակ Շուշուց։ Նամակ Բագուից։ Նամակ Ախալցխայից։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Արեւելեան գործեր։ Ֆրանսիա։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։

ՄԵՐ ԿԱՐԾԻՔԸ

—

„Մշակի" 210 համարի ներքին տեսութեան մէջ տպված „Տասն և եօթ հազար րուբլ" վերնագրով յօդուածը, քանի մի անձինք, ինչպես լսեցինք, ընդունել են որպես մի յօդուած, որ թշնամական զգացմունքից է թելադրված դէպի Լչմիածինը։ Ընդհասարակ ժամանակ է փարատել մի սխալ գաղափար. կարծում են, որ քննադատելով Լչմիածինը, մենք նրան թշնամաբար ենք վերաբերվում։ Դա ամենալաւ ապացոյց է որքան, մենք հայերս, դեռ սովոր չենք տպագրական փոքր ի շատէ ազատ խօսք լսելու։

Հայերի և առհասարակ ասիական հասարակութեան կարծիքով քննադատել մի հիմնարկութիւն նշանակում է թշնամութիւն անել այդ հիմնարկութեան դէմ, նշանակում է նրան վնասել, ցանկանալ նրա կործանումն։ Բայց ի՞նչն է չընդունել, որ քննադատելով մի հիմնարկութիւն, ընդհակառակն, մարդը ցանկանում է որ այդ հիմնարկութիւնը իր սխալներից ուղղվի, լաւանայ, բարւոքվի, ուրեմն աւելի հաստատ և տևողական գոյութիւն, աւելի յարգանք, աւելի հեղինակութիւն ունենայ։ Մենք վախենում ենք տպագրական խօսքի ազատութենից որպէս մի փաստակար, քանդող գործիքից և մոռանում ենք, որ այն մարդը, որ քննադատում է, նա բարի է ցանկանում, աւելի քան այն մարդիկ, որոնք ամեն բան գովում, ամեն բանին շողոքորթում, ուրեմն միայն եղած սխալներին են ձայնակցում ու անշարժութեանը նպաստում։

Եթէ հայոց լուսաւորչական եկեղեցին ժողովրդական սկզբունքի վրա է կայանում, եթէ մենք ենք կազմում եկեղեցին, եթէ ազգը ընտրում է իր բոլոր հոգևոր հովիւներին, սկսած կաթողիկոսից մինչև ծխական քահանան, եթէ ուրեմն ազգը, կամ նրա մտաւոր առաջնորդները իրաւունք ունեն քննադատել իրանց հոգևոր իշխանութեան գործունէութիւնը, այն ժամանակ Լչմիածինը, այդ գարևոր ազգային հիմնարկութիւնը, պէտք է իրան բարեկամ և ոչ թէ թշնամի համարի ազգի միջից յայտնվող քննադատող անձնաւորութիւններին։

Ու ճշմարիտ, ո՞վ է աւելի բարեկամ Լչմիածնի, մենք, որ աշխատում ենք, թէև գուցէ խիստ քննադատելով, զգուշացնել նրան զանազան Մանկունիների և Մամբրէների անսանձ կամայականութեան դէմ, բաց ենք անում Էչմիածնի աչքերը, ցոյց տալով նրան թէ քանի որ իշխանութիւնը կը լինի այդ տեսակ մարդկանց ձեռքում, ժողովուրդը հետզհետէ կը կորցնի իր առաջվայ յարգանքը դէպի մայրաթոռը, թէ նոյն Մանկունիները ու Մամբրէները, որոնք իրանց գործերով խայտառակում, կոտրում են Լչմիածնի անունը, վայր են գցում նրա վարկը ժողովրդի աչքում։

Մենք համոզված ենք, որ մի ժամանակ կը գայ, երբ Լչմիածինը վերջապէս կը հասկանայ, որ նրա իսկական բարեկամները մենք ենք եղել միշտ, մենք որ երբէք չէինք վախենում ուղղակի մայրաթոռի երեսին ճշմարտութիւնն ասելու, անհնայ քննադատել ենք մեր հոգևորականութեան կենցաղի գործերը, իսկ Լչմիածնի և նոյն իսկ Վեհափառ Կաթողիկոսի ամենաանհաշտ, ամենավճռական թշնամիները միշտ եղել են այն շողոքորթները, այն Մանկունիները և մայրաքաղաքների այն քուրմերը, որոնք իբր թէ մայր-աթոռի մասին հոգալով, հոգացել են միշտ միմիայն իրանց նիւթական շահերի մասին և իրանց խորհրդներով իսկապէս ամենամեծ վնաս հասցրին մեր հոգևորականութեան կենտրոնի հեղինակութեանը, իրանց գործունէութեամբ իրապէս հասան այն հետևանքին, որ սառնութիւն գոյացին հայոց հասարակութեան և Լչմիածնի մէջ։

Ընդհակառակը Կաթողիկոսը հիւանդ է, կամ շատ զբաղված է, այդ մենք չը գիտենք։ Մենք տեսնում ենք միայն քանի մի ժամանակից, որ Լչմիածինը և ամբողջ հոգևոր իշխանութեան գործերը անմիջապէս Վեհափառի ձեռքով չեն կառավարվում, այլ կառավարվում են կամ վանքի մէջ ապրող մի որ և է բաղդախնդրի ձեռքով, կամ ուրիշ տեղ ապրող մի որ և է եզուիտ, խարդախ, ազգուրաց, մատնիչ, դաւաճան քուրմի գրաւոր խորհրդներով։

Ուրեմն դրանից պարզ պէտք է տեսնեն, որ մեր քննադատութիւնները երբէք չեն կարող վերաբերվել անմիջապէս Վեհափառին, այլ այն ողորմելիներին, որոնք նրան շրջապատելով կամ հեռուից նրան խորհրդներ տալով, մոլորեցնում են նրան և մամբ հասել են արդէն իրանց նպատակին։ Նրանք իրանց ջանքերով այնքան վայր են դրել Լչմիածնի անունը, այն աստիճան կոտրել են նրա պատիւը, որ այդ հայոց ազգային դարևոր հիմնարկութիւնը ընթանալով այժմ իր պատմական դարևոր կոչմանը հակառակ, կարծես թէ ջանում է ազգայինը հիմնարկութենից դառնալ մի տեսակ պատրիարքարան։

Կասկածնք և կը տեսնենք։ Մենք դեռ յոյս չենք կորցնում որ կը գայ մի ժամանակ, երբ մայրաթոռի միաբանների բարեմիտ մասը, և նոյն ինքն Կաթողիկոսը վերջապէս կը համոզվեն, որ նրանց բարեկամները, Լչմիածնի հաւատարիմ զաւակները՝ մայրաթոռը խստութեամբ քննադատողներն էին, իսկ Լչմիածնի, թէև ծածուկ, բայց անհաւասարիմ թշնամիները, Վեհափառին շրջապատող այդպէս անուանված մտերիմներն էին և այն օձասիրտ, եղուիտ, իրանց բարեկամ ձևացնող, ամեն երևոյթին շողոքորթող, ոչ թէ միայն անշարժութիւն, բայց և յետադիմութիւն քարոզող քուրմ խորհրդատուներն էին։ Ա՛յո, կը գայ մի ժամանակ, երբ Լչմիածինը և ինքն Վեհափառը կը համոզվեն որ նրանց բարեկամները, նրանց անուան մասին հոգացողները՝ անհնայ քննադատողներն էին, իսկ նրանց ամենաահեղիմ թշնամիները՝ Լչմիածնի անունը իրանց գործերով ու խրատներով վայր գցող, նրան բարեկամ ձեռնտղներ, մայրաթոռի ազգային փողերը տանող անողներն էին։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

—

Նոյեմբերի 20-ին

Եթէ մի հայացք գցելու լինենք մեր ազգի ներկայ դրութեան վրա, մենք կը տեսնենք, որ հայ ազգը ապագայում երջանիկ և կրթեալ լինելու համար դեռ շատ բաների կարօտ է, որոնք ձեռք բերելու համար մեծ աշխատանք և մանաւանդ նիւթական միջոցներ անհրաժեշտ է ունենալ։ Սակայն ումից պէտք է սպասել նիւթական միջոց։ Ընդհանրապէս հայ հասարակութիւնը կարելի է չորս դասակարգի բաժանել. հոգևորականներ, ինտելիգենցիա, վաճառականներ և արհեստաւորներ (մի կողմ թողնենք երկրագործներին, որոնք իրանք կարօտութեան մէջ են)։

Հայ հոգևորականներից նիւթական միջոց անկարելի է սպասել։ Թիւրքաց Հայաստանի օրհասական րոպէում, երբ այդպիսիների պարտքն էր առաջին անգամ հրաւէր կարդալ, երբ Հայաստանի հառաչանքներին արձագանք էր տալիս հեռաւոր Անգլիան, երբ յետին մշակը չը խնայեց իր կոպէկը իր սուսաանջ եղբայրներին օգնելու համար, այդ միջոցին հայ հոգևորականութիւնը, հէնց նոյն իսկ Էչմիածինը պահում էր մի սառնասիրտ լռութիւն. ոչ մի քահանայի (սակաւ բացառութեամբ), ոչ մի աբեղայի անուն չը յիշվեցաւ նուիրատուաց ցուցակների մէջ։—Երեւաց, այո, 17,000 րուբլ.... մայր աթոռում նուիրատուութեան փող, բայց արդեօք ինչ էր այդ 17,000 րուբլի, եթէ ոչ ազգից ստացած կոպէկ-

Ներսես վրդ.

— Ներսես վրդ. Ներսես վրդ. Ներսես վրդ.

Ուզում եմ ԵՍՊՎԱՆՑ, որ չուզեցավ ինձ տալ ինչ-որ հարցազրույց իր տան մասին, ասելով, որ ինքն էլ չգիտի։ Ոչ ոք, գիտեմ, չի կարողացավ ասել ինձ իր կյանքի ամենաանսովոր, բայց ամենահետաքրքիր մասին, որ ես լսեցի Ֆրանսիայում, ուր ես գնացի մի քանի շաբաթով։ Ես ուզում էի տեսնել, թե ինչպես է ապրում մարդը, որ ամբողջ աշխարհին հայտնի է դարձել իր հանճարեղ գյուտերով։ Ես ուզում էի տեսնել նրա լաբորատորիան, որտեղ նա ստեղծել է իր հրաշալի ապարատները։ Ես ուզում էի տեսնել նրա ընտանիքը, նրա կենցաղը, նրա սովորությունները։ Ես ուզում էի տեսնել նրա ծերությունը։

Ես գնացի Վերսալ, որտեղ ապրում է ԵՍՊՎԱՆՑ։ Նա ինձ ընդունեց իր աշխատասենյակում։ Ես ուզում էի նրանից հարցնել, թե ինչպես է նա հասել իր հրաշալի գյուտերին, բայց նա ինձ ոչ մի բան չասաց։ Նա ինձ ասաց միայն, որ ինքն էլ չգիտի, թե ինչպես է հասել դրանց։ Նա ասաց, որ ինքն էլ չգիտի, թե ինչպես է ապրում։ Նա ասաց, որ ինքն էլ չգիտի, թե ինչպես է ծերանում։

Ես հարցրի նրան, թե ինչ է նա կարծում իր մասին։ Նա ասաց, որ ինքն էլ չգիտի, թե ինչ է կարծում իր մասին։ Նա ասաց, որ ինքն էլ չգիտի, թե ինչ է կարծում իր մասին

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿՈՎԿԱՍԵՏՆ ԳԻՒՂԱՏՆՏԵՍՈՒԹԻՒՆԸ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ պ. պ. ԸՆԴԱՍՆԵՐԸ հրաւիրում են նոյեմբերի 29-ին, երեկոյեան 7½ ժամին ներկայ գտնուել արտաքոյ կարգի նիստին ընկերութեան բնակարանի մէջ ընկերութեան խորհուրդի հետեւեալ զեկուցումը քննելու համար: «ՓԻՒՕԿԱՍԵՐՈՅԻ» դէմ ՄԻՒԼՅՈՅՆԵՐ գործադրելու համար, որ նա չը մտնի Կովկասեան փոխարքայութեան սահմանները և որի կորստաբերը ապրեցուցիչը յայտնուել է ՂՐԻՄԻ որթերի վրայ: Ժողովին կարող են ներկայ գտնուել նոյնպէս և օտար անձինք:

2—2

Ծախում եմ ՏՆԵՐԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ համար ՀՈՂԻ ԿՏՈՐՆԵՐ, ինչ չափի էլ կամենայ գնողը, Մուշայիդի այգու միւս կողմը, ՄԵԼԻԿՏՆՆԵՐԻ սկսած ՇԻՆՈՒԹԻՒՆԸ ՄՕՏ, իւրաքանչիւր քառակուսի ՍԺԻՆԸ ՀՆԳԵՒ ՎԱՃ ՐՈՒԲԼԻ: Հազար քառակուսի սաժէնից աւելի գնողներին իւրաքանչիւր քառակուսի սաժէնին 50 կ. ՕԴՆՈՒՄԸ Ի ԼԻՆԱԼ: ՓՈՂԵՐԻ ԿԱՆԽԻՑ ոչ աւելի վճարելը կաըելի է ՈՒՐՇԱՑՆԵԼ տարեկան 8% վճարելով: Հարցնել Միխայլովսկայա փողոցի վրա № 123 ՏՆՆ սիրոջը: Կոլոմնայում:

5—3

Վաղը, Նոյեմբերի 30-ին

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎՐԴՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

ԼԻՆԵՎՈՒԻ

ԳԱՐԱՆԳԷՍ

ՅՕԳՈՒՏՍ

ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸՆ

ՀԱՅԵՐԷՆ ԳՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸՆ

Մուտքի գինն է՝ տղամարդոց համար 2 ր., կանանց համար 1 ր.:

Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ Էրէլէմնի խանութում, կենդրոնական գրաւաճառանոցում և Եփռեմեանցի խանութում:

ՍԿԻԶԲՆ Է ԵՐԵԿՈՓԵԱՆ 9 ԺԱՄԻՆ:

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ ԿԱՐԻ ԼԻ ՁԵՌԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՄԷՋ

ընդունում են կանանց և երեխաների զանազան հագուստներ կարելը և ձևելը: Մի և նոյն տեղը վերցրած չափով պատրաստում են օրինակներ զանազան նորաձև հագուստների ամենաչափաւոր գներով: Յանկացողների համար սովորել ձևել և չափը վերցնել ամենանոր եղանակով, գործադրութեան օգնութեամբ, ուսումնարանի մէջ որոշուած ժամանակներում աւանդվում է այդ նոր եղանակը: Բոլոր եկամուտը ուսումնարանը բարելաւելու համար է գործադրվում: Մանրամասնութիւնները իմանալ ուսումնարանի մէջ, Երևանալայա փողոցի վրա, № 33 տան մէջ:

1—3 (2)

ՀԻՆԳՇԱԲԹԻ օր, 27-ին նոյեմբերի կը սկսվի ՋԱՆՂՈՒԱՋՈՎՆԵՐԻ մագաղինում տղամարդկանց կօշիկների և գդակների վաճառումն, զիջումով, առանց աճուրդի: Առնողները կարող են ընտրել և փորձել առած կօշիկները: Նոյն տեղ վաճառումն գինու և արաղի նշանակված գներով:

3—5

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ցանկանում է տալ ՀԱՅԵՐԷՆ և ՓՐԱՆՍԻԱԿԵՐԷՆ լեզուների դասեր: Հասցէն կարելի է իմանալ զրավաճառ պ. Ալեքսիք Լէոֆիջեանից:

3—8

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ ՍԻՐԱԾ ԸՆԳԼԻԱԿԱՆ ՄԵԳԱՋԻՆԸ ծախում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ և այլ ապրանքներ: Որովհետև այդ մագազինը ստանում է թէյ ուղղակի պանտաւրներից, առնում է բոլոր ապրանքները ուղղակի գործարաններից և բաւականանում է փոքր շահով: Ներդրել կայ տարեկան 50,000 ֆունտ թէյ առաջին տեսակի, կակաւ և շոկոլադ-փրայ, մուրաբա և կոնֆէկտներ 25% աւելի էժան, քան թէ ամեն տեղ, անկողմնակներ, հրացաններ, բէվոլվէրներ, կողպէքներ, մատուցարաններ, ամանեղ, դանակներ, գդալներ, թէյամանեղներ, բաժակներ, թամբեր, գուլպաներ կանանց և տղամարդկանց, թաշկինակներ, մակինտօշներ, կալոշներ, թուղթ, մատիտներ, տետրակներ, գրիչներ ամեն ձեռքի համար և այլն, 20 մինչև 40% աւելի էժան քան թէ ուրիշ տեղ: Ընծրուհու գալլերէում:

8—100

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼՅԻ ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ, որ երկար ժամանակ պարապել է առևտուրով, ցանկանում է ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ, կամ կանոորշ չիկի պաշտօն ստանալ: Հասցէն պէտք է իմանալ «ՄՇԱԿԻ» խմբագրատանը:

4—6

Հրատարակութեամբ Ղ. Գրիգորեանցի՝ մամուլի տակից դուրս եկաւ պ. Ն. Սիմէօնեանցի աշխատասիրած հայոց դպրոցների համար ընդհանուր աշխարհագրութեան դասագրքերը, որոնք արդէն ընդունվել են ինչպէս Թիֆլիսի, նոյնպէս և գաւառների հայոց երկսեռ ուսումնարաններում և Ս. Էջմիածնի ճեմարանում:

Դասագրքերը վաճառվում են բացառապէս Կովկասեան զրավաճառանոցում Ղ. Գրիգորեանցի:

Ա. տարի՝ Նախագիտելիք (Հայրենագիտութիւն Թիֆլիսի) 35 կ.

Բ. տարի՝ մասն ուսումնական և քնարան (31 պատկերներով) 60 կ.

Գ. տարի՝ մասն քաղաքական (Եւրոպա, Ասիա, Աֆրիկա, Ամերիկա և Աւստրալիա) 60 կ.

Գումարով առնողին զիջումն կը լինի:

5—20

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱԳԱԶԻՆՈՒՄ

Համեմատեցէք թէյի ֆունտը			1 ր. 5 կ.	Մօսկվայից բերվող թէյի հետ			ֆ. 1 ր. 30 կ.
—	—	—	1 ր. 10 կ.	—	—	—	ֆ. 1 ր. 40 կ.
—	—	—	1 ր. 20 կ.	—	—	—	ֆ. 1 ր. 60 կ.
—	—	—	1 ր. 40 կ.	—	—	—	ֆ. 1 ր. 80 կ.
—	—	—	1 ր. 60 կ.	—	—	—	ֆ. 2 ր. —
—	—	—	1 ր. 80 կ.	—	—	—	ֆ. 2 ր. 50 կ.
Ամենալաւը	—	—	2 ր. —	—	—	—	ֆ. 3 ր.

8—100

ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ՆՈՐԻՆ ԿԱՑՅԱԼՐԱԿԱՆ ԲՈՒԺԱՐՈՒԹԻՒՆԸ

ՄԱՆՈՒՐ ԻՐԽԸՆ ԿՈՎԿԱՍԵՏՆ ՓՈԽԱՐՔՈՒԹԻՒՆԻ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹԵԱՄԲ ԲԱՑՈՒԱԾ

Կուկիայում, Սիմէօնովսկի փողոցի վերայ (կամրջից 3-րդը Միխայլովսկի փողոցի կողմը), Ախվերդեանի տանը:

Հիւանդներին ընդունում են ամեն օր հետևեալ բժիշկները՝

Առաւօտեան ժամի 9—11

Նաւասարդեան—խիրուրգիական և վեներական (սիֆիլիտական) հ.

Րուդկովսկի—կանանց և ներքին հ.

Առաւօտեան ժամի 11—1

Լունկեվիչ—աչքերի, վեներական և կաշուի հ.

Հայազիզեանց—ներքին հիւանդութիւնների:

Երեկոյեան ժամի 5—7

Ոշական—երեխայոց հիւանդութիւնների:

Պավլովսկի—ջղային, հոգեկան և ներքին հ.

Հաւաթ օրերը երեկոյեան ժամի 7—8 հիւանդներին ընդունում է ընդհանուր բժշկական խորհուրդը (консультація)

Վենկարաբուժութիւն—ամեն երեկոյեան ժամի 5—7:

Ծաղկահատութիւն (ծաղիկ կարել) բժշկի ձեռքով առաւօտեան ժամի 9—11:

Գիշերապահ բժիշկը—երեկոյեան ժամի 9-ից մինչև առաւօտեան ժամի 7-ը նպատակ է տալիս հիւանդներին նոցա տանը և հիւանդանոցում:

Հիւանդանոցումը կան և մշտական մահճներ գիշերօթիկ հիւանդների համար:

Վարձ՝—երթևեկներից ցերեկը . . . . . — ր. 50 կ.

Փոքր օպերասիօններ իրանց վիրակապով . . . . . 1 ,, — ,,

Ընդհանուր բժշկական խորհրդի (консультація) . . . . . 3 ,, — ,,

Ծաղիկ պատուաստելու (կարելու) . . . . . 1 ,, — ,,

Գիշերապահ բժշկին հիւանդանոցումը . . . . . 1 ,, — ,,

— հիւանդի տանը . . . . . 3 ,, — ,,

Գիշերօթիկ տեղերի վարձը առանձին համաձայնութեամբ:

Ընքատները ընվարձեն ստանում բժշկական խորհուրդ և դեղ:

Հիւանդանոցումը մշտապես բնակվում է բժիշկ Առաւարդեանը:

Դիրեկտոր բժշկապետ Պավլովսկի

Дозволено цензурою, Тифлисъ, 28 Ноября 1880 года.

Типографія Главн. Управ. Намѣстн. Кавказск.